ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Լենա Նանուշյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ռուսաստանի Դաշնություն, Սոչի, 2021 թ. հունիսի 23-25

4. Հրավիրող կողմը

Ռուսաստանի Դաշնության սպառողների իրավունքների և մարդու բարեկեցության պաշտպանության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայություն

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն «Կենսանվտանգության գլոբալ սպառնալիքներ. խնդիրներ և լուծումներ» խորագրով 3-րդ միջազգային համաժողովին

6. Քննարկված թեմաները

Համաժողովը կազմակերպվել էր Ռուսաստանի Դաշնության սպառողների իրավունքների և մարդու բարեկեցության պաշտպանության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայության և ՌԴ արտաքին գործերի նախարարության համատեղ ջանքերով:

Երկօրյա համաժողովի ընթացքում պատվիրակները քննարկեցին COVID-19-ի համավարակի պայմաններում վարակիչ սպառնալիքների նկատմամբ արագ արձագանքման փորձը, ինչպես նաև այս ոլորտում իրականացված գիտական հետազոտությունների հարցերը: Քննարկումների հիմնական նպատակն էր գիտատեխնիկական փոխգործակցության, փորձի փոխանակման միջոցով նպաստել

կենսանվտագության ապահովման ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդմանը:

Միջոցառումը կազմակերպվել էր՝ ելնելով բնակչության համաճարակային բարեկեցության ապահովման անհրաժեշտությունից:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովին հանդես եմ եկել Հայաստանում COVID-19-ի հակազդմանն ուղղված հակահամաճարակային միջոցառումների և այդ ոլորտում միջազգային համագործակցության իրականացման փորձի վերաբերյալ ելույթով:

Համաժողովի երկրորդ օրը մասնակցել եմ նաև միջոցառման շրջանակներում կազմակերպված ԵԱՏՄ անդամ-պետությունների բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ոլորտում լիազորված մարմինների ղեկավարների խորհրդի հերթական նիստին:

ՀՀ առողջապահության նախարարության պատվիրակության մյուս անդամը՝ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի գլխավոր տնօրենի տեղակալը հանդես եկավ Հայաստանում COVID-19-ի դեմ պայքարի ոլորտում իրականացված գիտագործնական գործունեության մասին զեկույցով:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Սոչիում կայացած համաժողովի կազմակերպիչները պետական կազմակերպությունների, գիտական ասոցիացիաների և ոչ առևտրային ոլորտի ներկայացուցիչների համար հնարավորություն էին ընձեռել ունենալու բաց քննարկումներ և խորացնելու համագործակցությունը գլոբալ կենսանվտանգության ապահովման հարցերում:

Համաժողովը միաժամանակ հնարավորություն ընձեռեց գործընկերների հետ ավելի սերտ միջավայրում քննարկելու կենսանվտանգության ապահովման ոլորտում հետագա համագործակցության ուղղությունները: Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը սերտ համագործակցում են վերը նշված ոլորտում, որի վառ ապացույցն է 2018 թվականի նոյեմբերի 20-ին Ռուսաստանի Դաշնության Սարատով քաղաքում ՀՀ առողջապահության

նախարարության և Ռոսպոտրեբնադզորի միջև ստորագրված Միջազգային բժշկասանիտարական կանոնների ներդրման ուղղությամբ համագործակցության մասին Համաձայնագիրը, որի շրջանակներում ռուսական կողմը Հայաստանին նվիրաբերել է շարժական լաբորատորիա՝ նախատեսված վարակիչ հիվանդությունների մշտադիտարկման, արձագանքման և ինդիկացիայի համար:

Ռուս և միջազգային մյուս գործընկերների հետ հանդիպումների ժամանակ մեկ անգամ ևս շեշտվեց կենսանվտանգության և վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ոլորտներում փոխգործակցության, ինչպես նաև «Կենսաբանական և թունավոր նյութեր պարունակող զենքի արգելման մասին» Կոնվենցիայի, որպես կարևորագույն բազմակողմ գործիք, կիրառման կարևորությունը, ինչը թույլ կտա ամբողջ միջազգային հանրությանը պաշտպանված լինել վարակիչ հիվանդությունների վտանգներից:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

30.06.2021 թ.

X _____